Ավետիք Իսահակյան

Միթե պիտի թոռմին, թոշնին

Մի՞թե պիտի թոռմին, թոշնին
Վարդ ու շուշան խնկաբույր,
Անդորր լռեն թոչունների
Վառ մեղեդին,
Ակն – աղբյուր:

Մի՞թե պիտի, չքնաղ ընկե՛ր,
Կյանքի անուշ հույզերից
Կուրծքդ հանգչի, - լուռ դադարիս
Սառն ու անկյանք
Շիրիմի տակ …

Մի՞թե պիտի փոշի դառնան
Այդ աչքերըդ կենսավառ,
Ուր շողում են հույս ու տենչեր –
Սիրո աստղեր
Ինձ համար:

Մի՞թե պիտի վառ ժպիտըդ
Եվ արցունքիդ ծիածան
Ինչպես երազ անդարձ մարին
Խոնավ հողում
Հավիտյան:

Օ, ի՞նչ, - մի՞թե, մի՞թե, հոգյա՛կ,
Պիտի անհետ մոռացվիս,
Ձյունի շերտեր վրրադ դիզվին,
Փոշիդ տանի
Ցուրտ քամին …

1892
Ղազարապատ